

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կես տարեկանը 6 ռուբլ. 50 կոպեկ
 Առանձին համարները 5 կոպեկով
 Թիֆլիսում գրվում են միմյանց նամակները մեջ.
 Խմբագրությանը գրվում են ուղղակի
 Thebaica. Редакция «Мелк»

Կերպարանի թուղ է առաջառնել 10—2 ժամ
 (բացի կիրակի և տոն օրերից)
 Երաժշտությանը ընդունվում է ամեն լիզուով:
 Խմբագրությանը համար գնումով են
 կերպարանի թուղը 2 կոպեկով

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Մեր թղթակցները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԽՈՍՏԻՍ ԳԵՐԱՆՆԻՍ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆ.—ԶԵՆԱԿԻՆՆԵՐ.—ՍԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԿՈՒՆԻՍՏԱՆՆԵՐ

ՄԵՐ ԹՈՒԹԱԿՆԵՐԸ

Մեզանում, Հայերիս մեջ սովորած ինչ կայ արտասանել գեղեցիկ բառեր, ճաճող փրազներ, առանց նրանց խմաստը հասկանալու:

Այդ տեսակ փրազներին պատկանում է և այն մեզանում ամեն տեղ կրկնվող գեղեցիկ, բայց անխմաստ նախադասությունը, թե ամեր ազգի բարոյական վերածնություն թեան միակ միջոցը դպրոցներն են:

Այդ նախադասությունը բոլոր Հայերս կրկնում ենք թուրքական պես, այդ նախադասությունը սկսվում են գրել թե բոլոր թուրքական լեզուները, որից ստացվում են խմբագրություն մեջ:

Ասենք թե մեր Հայոց դպրոցները շատ լաւ են, ասենք թե նրանք հասնում են իրանց նպատակին և ճշմարիտ բարոյա-

կան և մտաւոր զարգացումը ազգի մեջ տարածելու մի գորեղ միջոց են կազմում,—դարձեալ, որքան էլ լաւ լինեն դպրոցները, ոչ մի ազգի մեջ չէ կարելի ասել թե ուսումնարանները ազգի մտաւոր և բարոյական վերածնություն թեան միակ միջոց են, քանի որ մարդկային ժամանակակից հասարակությունը ճանաչում է մի այլ, նոյնքան, և գուցէ ավելի գորեղ գործիչ ազգի մտաւոր և բարոյական զարգացման.... Այդ միջոցը մամուլն է, այդ բառի լայն նշանակությունը, որ իր մեջ ամբողջում է գրականությունը և լրագրությունը, որի այլ և այլ ներկայացուցիչներն են լրագրիչը, ստնագիրը և գիրքը....

Հետո չը գնանք վեր առնենք, որպէս օրինակ Ռուսաստանը և ուրիշ այժմեան հասարակությունը: Այդտեղ մենք տեսնում ենք որ հասարակություն մեջ բարոյական և մտաւոր զարգացման գործիչներից մամուլը ավելի գորեղ, ավելի գործնական, ավելի գրական միջոց է, քան թե դպրոցը, որի կազմակերպությունը դեռ ևս շատ

թոյլ, պակասաւոր և շատ քիչ ընդհանրացած է ազգարնակություն թեան թիւին համեմատ:

Մեզ մտ, Հայերիս մեջ, առաւել ևս կարելի է ասել, որ մամուլը ավելի գորեղ միջոց է ազգի բարոյական և մտաւոր զարգացման, քան թե ուսումնարանը: Մեզ մտ, մամուլը տաս տարեկան մեջ ավելի արաւ ազգի մտաւոր և բարոյական զարգացման համար, քան թե դպրոցը յիսուն տարեկան մեջ:

Այն երկիրների մեջ, որտեղ դպրոցական սիստեմը օրինակելի է, այնտեղ էլ ոչ ոք չի համարձակվի ասել, որ ազգի վերածնություն թեան միակ միջոցը դպրոցն է, այնտեղ էլ նոյնքան և գուցէ ավելի մեծ ազդեցություն ունի ազգի մտաւոր և բարոյական զարգացման վրա մամուլը, որ մնայ մեր հասարակություն մեջ, որտեղ դպրոցը ամենաթշուառ, սկզբնական, նահապետական, աճեցող թեան մեջն է դեռ ևս:

Ընդունենք որ Արաբիան դպրոցը առաջինն էր, որ հիմնվեցաւ կովկասեան Հայերիս մեջ:

արդէն յիսուն տարուց ավելի է որ նա գոյութիւն ունի: Արաբից յետոյ հիմնվեցան թե թիֆլիսում և թե կովկասեան Հայաբնակ գաւառական քաղաքներում ուրիշ բազմաթիւ թե արական և թե իգական դպրոցներ: Այնպէս ևս կազմեցան մեր դպրոցներից ամենախաւերը, թե արականները և թե իգականները Թիֆլիսումն են գտնվում, որ համարվում է ուսուսաց Հայերիս մտաւոր կեանքի կենտրոն:

Բայց ի՞նչ շշտակելի գործ կատարեցին այդ բոլոր դպրոցները տարիների ընթացքում:

Արանք գրագիտութիւնը տարածեցին, կր պատասխանեն մեզ, ուրիշ ի՞նչ կարելի է պահանջել դպրոցից....

Այժմ գտնե՛ք այսքան անկէն մեր ուսումնարանները, եթէ ճշմարիտ ազգի մեջ մայրենի գրագիտութեան տարածման նպատակ լինէին, մենք շատ գո՛՛ կր լինէինք և կասէինք որ մեր դպրոցները կատարեցին իրանց պաշտոնը, հաւատարիմ մնացին իրանց կոչմանը....

Այս մեր խմբագրական տաս

ԻՆԻՐ ԲԵԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ

(1722—1728)

ԺԴ

Մի և նոյն գրիչը, երբ դուրսից բեկը Սաբուի նաւ առանձնացած էր իր նմարանում, լայնագոյր իշխանը միայնակ նստած իր սենեակում, մէկին անհանգստութեամբ սպասում էր: Չիթային նրա գիրքը, որ ասելի ևս չէր, մէկ էր իշխանի անընդհատ ծիտող չիթախի մոտից: Նախ կարգանում էր լուսաւորել սենեակի մէջ տրոպ միութիւնը: Պարսից թագաւորի լաթեան գլխի ազգաւ ընկաւարանը իր կարգաւորեցով բարոյութիւն համապատասխանում էր նրա սպարաւական խոսակցութեանը, որը նա ծայրաչեղութեան էր հասցրել: Նա հողով նկատու էր, իսկ մարմնով գիտուոր: Մերի սենեակի մէջ դրած էր մի փոքրիկ տախտ, առանց տախտի, որի վրա պատկում էր նա: Տարբայ բոլոր եղանակներում նրա անկողնից բազկացած էր իր կախումը: Անհանգի մէջ կրակ երբէք չէր փայլում, կրակը մարդու ներքին պայտը: Ապաստանում էր նա, երբ հարցնում էին, թէ ինչու չէ փախել տախտ սենեակը: Մի պատից քարը էին ընկած իշխանի գլխիցը: Էլ ուրիշ ոչինչ չէր կար այնտեղ: Այդ պատից, լայնից և օդից զրկված ընկաւարանին կից էր ստուգաւոր: Անտեղ կարգում էր նրա մտքի մէջ, այնտեղ ընկնում էր նրա նոյնքան մտքի մտան, որի նա այն աստիճան ընտանեցած էր, որ շատ անգամ մտանում էր,

արդեւոր նա է տերը թէ ինքը: Այդ էր նրա ընտանիքը.—մին, ինքը և ծառան,—եթէ ասելուցնեղը դրանց վրա նրա անգործ գայլանման շունը, ընդամենը չորս հոգի:

Իշխանը անհանգիտ էր. տախտի վրա պտուկած, անդադար մի կողմից զէպի միտն էր շուտ գալիս: Նրա անհանգստութիւնը ուրախութեան անհանգստութիւն էր. զա նոյնքան ծանր է, որքան տրտմութիւնը: Եզոված տրտը կամենում էր թեթեւացնել իր ուրախութեանը կամենում էր մի բարեկամի ևս մտանկից անել: Բայց «ո՛ր մնաց նա, ինչու ուշացաւ»: Նա վեր կացաւ, սկսեց անցուղաւ անել սենեակի մէջ. այդ ևս շուտով ծանրացրեց նրան: Դուրս եկաւ բակը: Դարձանային խաղող զիւրը բուրում էր գուտը: Թագուցիլ անուշաուրութեամբ: Ամենուրեք տրտում էր լուսութիւն. ամբողջ Մեջիթը թնամ էր: Նա սկսեց ման գալ բակում, որի տարածութիւնը շատ ընդարձակ էր: Գրեթէ հարիւր անգամ անցաւ նա բակի մի ծայրից զէպի միտը, երբեմն կանգնելով, և ցանկապատից նայելով զէպի խոտը փոքրը: «Ո՛ր մնաց, ինչու ուշացաւ».... անհանգստութեամբ կրկնում էր նա: Եթէ մէկը այն անգամ գիշերային պահում տեսնելու լինէր իշխանին այդ անընդհանրութեան մէջ, անպատեա կը մտածէր, թէ նա սպասում է իր սիրունուն, բայց նրան այժմ հայր թէ կարող էր գրաւել կեանքի մեծագեղեցիկն անգամ: Նա սպասում Միթիսը սպարաւարան, որ մամուլի էր եղած իր մտ գալու մի քանի կարեւոր նպատակի մասին խորհելու նամար:

Վերջապէս եկաւ նա: Բակի ցանկապատից, որ այնքան բարձր էր, տեսաւ նա, որ մէկը փոքրով գալիս էր: Սպասուորը լուսաւորում էր նրա նամարը: Թեւ չէր լայնաբով, իշխանը առանց իր ծառայի գարկեցնելու, ինքը գնաց բակի գուռը բաց արեց:

—Ինչ հիւանդի խնամք քերոզ կը լինես,

մինչև քերես, նա հոգին կը տայ, տայ իշխանը, բակի գուռը կրկին կողմնաւոր:

—Ես գիտեմ, որ այսպէս պիտի ասես, պատասխանեց սպարաւարտը.— իսկ եթէ գիտեմա իմ ուշանալու պատեաւը, չես մեղադրի ինձ:

Երկուսն էլ մտան իշխանի սենեակը: Սպարաւարտի նաւ եկող ծառան գնաց ստուգաւորը սպասելու իր տրոպը:

—Հիմայ պատիք, ինչ չինեցիր, հարցրեց սպարաւարտը, նստելով տախտի վրա:

—Գործը ինչն իրան չիմեցաւ.... և ես նաւասացած էի, որ այսպէս էլ կը լինէր, պատասխանեց իշխանը ուրախութեամբ:— Մի քանի ժամ առաջ ինձ մտ էին, բոլորն էլ երգվեցան, թէ կը գան մեզ նոս:

—Բայց զու չը պիտի յայտնէր նրանց գործի բուն նպատակը:

—Բայնիցորը իսկըը հոգի ու պանդի նա չի կերել: Նա այդ ստանաւորութիւնները շատ լաւ է իմանում: Նա գիտէ, որ բա՛ւր չը պիտի հականայ, թէ ինչ նպատակով մշակը նրանով փորում է հողը:

—Ուրեմն զու ինչ կերպով բացատրեցիր նրան:

—Շատ հասարակ կերպով, ևս այսքանը միայն ասեցիր, թէ թէ կը մի սարսափելի տեղեկութիւն է ստացել: Հայաստանում կողմնել է մի մեծ գաւառութիւն, մանկապատեա պատրաստվել են հայերին կոտորելու և հայերը թէկից օգնութիւն կատարեցան, բոլորը փառվեցան, և առանց իմ թելադրութեան, իրանք պատրաստակաւորութիւն յայտնեցին Հայաստան գնալու և իրանց հայրենակիցներին օգնելու: Այդ շափազանց ուրախացրեց ինձ, ևս մինչև այսօր կարծում էի, թէ կարելի էր ինձ, վրացիներից ստացած անհոգութեամբ խաղաւ փշաջրել է գրանց, բայց այսօր համոզվեցայ, որ հայի սրտում չէ անգուղակ հայրենասիրութեան կայ

ծը, նա հանգամանքներից փոքր ինչ նստեա նում է միայն. բուական է փչել նրա վրա և անա նա կը բորբոքվի, կը բացաւաւորի....

Վերջին խոսքերը սրտասանեց իշխանը խիտա զգալի ողորութեամբ, երեսով էր, մի և նոյն սուրը հուրը բորբոքում էր և նրա սրտում, Բայց սպարաւարտը բուական ստանութեամբ հարցրեց.

—Ո՞րքեր են ցանկացողները:

—Այստեղ գտնվող բոլոր հայ վարասականները, բոնեցի Աթիսեղից գնդապետը, մեծ Գիորգին, փոքր Գիորգին, երեսնցի կազ Սանէալը, չուչեցի Զարգարայ իշխանը, նախի՛նեանցի պատանի Մոսիս, շամախեցի Բազէա թէկը, գանձակեցի Եզիպար ազան, վագարապատցի Եսաբիսն ստանաւորը,—բացի գրանցից կան ուրիշները, որոնց զու չես ճանաչում: Հաշուել եմ, մեր բոլորի թիւը քառասուն հոգի կը լինի այս տեղից դուրս գալու ժամանակ:

—Բայց զու փառաւորութիւն ունես այդ մարդկանց հաւատարմութեան վրա, հարցրեց սպարաւարտը ցած ձայնով:

—Բարոյին իմ հինգ մասի պէս ճանաչում եմ լափազանց հարթիկ, յա՛նգակ, փորձված և վերին աստիճանի անմասուկը մարդիկ են: Եթէ ասելու լինես՝ կրակի մէջը մտքը, իսկոյն կը նետվեն: Եւ գլխուորն այն է, որ այդ մարդիկներից ամեն մէկը ունի իր պատմութիւնը, սոգորված է իր սուտային ստանգութիւններով: Նրանցից չը կայ մէկը, որ իր սրտում չը կըրէ մի գաղանի վերք, որ ստացել էր բաճութեան կոպիտ մեռ թից: Եւ ինչ այդ տեսակ նախաձեռն, ստեղծված և վառացած մարդիկը մեզ պէտք կը գան:

—Ես էլ այսպէս եմ կարծում, սասց սպարաւարտը և նրա մտաւորով զէճը, որ մինչև այժմ բուական տխուր էր երեսով, սկսեց փոքր առ փոքր պայծառանալ:

Հազարեկով սպարաւարտին իր տեղեկութիւնները, իշխանը հարցրեց.

տարվայ գործունեութեան փորձից մենք համոզվեցանք, որ շատ սակաւ բացառութեամբ կը գրտնէք մի որ և է հայոց դպրոցում իր ուսումը աւարտած մի հայ կամ հայուհի, որ ոչ թէ միայն անտալ կերպով հայերէն գրէր, բայց ուղղագրութեան կողմից քիչ թէ շատ օրինաւոր կերպով տիրապետէր իր մայրենի լեզուն....

Երկրորդ՝ պէտք է պարզել ինչ է գրագիտութիւնն ասած բանը: Այժմէ գրագիտութիւնն ասելով մենք պէտք է հասկանանք կարգաւ ու գրել իմանալը, — այն ժամանակ մենք վիճելու առիթ չենք ունենայ մեր դպրոցների ու գեորված պաշտպանների դէմ: Բայց եթէ գրագիտութիւնը մեք են այնպէս գործողութիւն չէ միայն, այլ նրա մէջ պարունակվում է և մի բարոյական խորհուրդ, այն ժամանակ ամենակաւնաւոր կերպով կարգաւ գրել իմացողին էլ մենք զեռ ևս գրբա գէտ, այդ բառի բուն նշանակութեամբ անուանել չենք կարող:

Ինչ նպատակ պէտք է ունենայ իւրաքանչիւր դպրոցը, թէ արական և թէ իգական, նրա նպատակը պէտք է լինի մի այնպիսի գորեղ բարոյական և մտաւոր զարկ տալ աշակերտին, որ մտաւոր կեանքի պահանջ չը գրգացողը ստանայ այդ մտաւոր պահանջը, որ դպրոցից դուրս գալուց յետոյ էլ աշակերտը շարունակի մտաւոր կեանքով ապրելու:

Բայց մեր բոլոր դպրոցներում գրագիտութիւնը մի մեքենայական, անշունչ գործողութիւն է միայն: Գրագէտ լինել, կը նշանակէ մեզանում կարգաւ գրել իմանալ, բայց ոչ պահանջ զգալ կարգաւ և գրել: Գրագէտ գարձնել կը նշանակէ մեզանում կարգաւ գրել սովորեցնել, բայց ոչ թէ մարդու մէջ նրա ամբողջ կեանքի համար պահանջ ծնեցնել մտաւոր կեանքով ապրելու:

Արեւմտեան դպրոցից կամ Գալիանեան ուսումնարանից աւարտում են մի հայ երիտասարդ և մի հայ օրիորդ: Արանք երկուսն էլ հայերէն կարգաւ գրել գիտեն: Բայց ուսումնարանից լուրջ և վկայականը գրպանը դնելուց յետոյ, այդ երիտասարդը և այդ օրիորդը իրանց կեանքի ամբողջ ընթացում այլ ևս ոչինչ չեն կարգում, այլ ևս պահանջ չեն զգում որ և է մտաւոր կեանքով ապրելու: Այդ բաւական չէ. ուսումնարանը թողած, նրանք այլ ևս ոչինչ պահանջ չեն զգում իրանց մայրենի լեզուով խօսելու, այլ շարունակում են իրանց ամբողջ կեանքը օտար լեզուով խօսելու, որի հետեւ ինչ նրանք մինչև անգամ այն օգուտն էլ չեն քաղում, որ կարգան այդ լեզուով հրատարակվող գրքերն ու լրագիրները:

Արեւմտեան յայտնվում է որ գրագրոցը սովորեցրել է նրանց կարգաւ գրել ոչ թէ նրանց մտաւոր գոյութեանը փրկարար զարկ

տալու, մտաւոր կեանքի պահանջ նրանց մէջ ներշնչելու համար, այլ սովորեցրել է նրանց գրագիտութիւնը որպէս մի անշունչ, մեքենայական և կեանքի մէջ անգործագրելի մի գործողութիւն....

Այդ տեսակ դպրոցները համարվում են մեզանում ազգի բարոյական և մտաւոր վերածնելու թեւան գործիչներ....

Այդ դպրոցական այդ անշունչ, մեքենայական, անկենդան, անգործադրելի և աննպատակ գործունեութեան հետեանքն էլ ակնհայտ է մեզ համար:

Տես տարվայ ընթացքում մենք տեսնում ենք որ իւրաքանչիւր տարի կովկասեան բազմաթիւ թէ իգական և թէ արական հայոց դպրոցներից անթիւ աշակերտուհիներ և աշակերտներ են դուրս գալիս, — բայց գրքի, լրագրի, ամսագրի կարգացողների թիւը դարձեալ մազի չափ չէ աւելանում....

Արեւմտեան գրագիտութեան բառի լայն և բարձր նշանակութեամբ մեր դպրոցները մինչև անգամ գրագիտութիւնն էլ չեն տարածում, գրագէտ մարդիկ էլ չեն պատրաստում, քանի որ գրագիտութիւնը մի մեքենայական, մտաւոր անընդհատ դարգացման, կենսական անհրաժեշտ պահանջ պէտք է լինի, որ միշտ կարօտ պէտք է լինի մտաւոր նոր և նոր սնունդի: Արեւմտեան մեր հարցը մի-

թէ այդ տեսակ դպրոցներ կարող են համարվել ազգի վերածնութեան միջոցներ.... կամ աւելի ճիշդ չէր լինի արդեօք նրանց գոյութիւնը անուանել ժամափառութիւն, իսկ մեր մանկավարժների գործողութիւնը աննպատակ ջուր մազելը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԲԵՆԻ ԼՈՒՐՈՐ

Թագաւոր կայսրը զեռ չէ անցել Չեռնոյն պալատը, այլ զեռ կենում է Ամիշիով սակ պալատի մէջ, որտեղ կենում էր և Թագաւորը եղած ժամանակ «Норме Врека» նազը դուր է որ Ամիշիով պալատից նեւազրակ թեւ են անցնեցնում մինչև Չեռնոյն պալատը:

Արաբի 17-ին, ինչպէս հարգում են լրագիրները, Թագաւոր կայսրին ներկայացան պատուարութիւնները զմտափոփոցից, բազմութից, ազնականութիւններից և գրագրութիւնից պատուարութիւնը միջոց ներկայացրից Թագաւորին ազ և հայ: Թագաւորը ամենքին շարունակութիւն յայտնել իրանց համարութեան համար:

Մոսկ. Телеграфը լրագրող լսել է որ Թագաւորին ներկայանալու համար եկած շուրջ քաղաքապետութիւններից լեւական պատգամաւորութեանը հրամայված է գործել մի քանի ժամանակ մեռել Ս. Պետերբուրգում:

Վարչապետի համալսարանի մէջ լեւական գրականութեան ցարգիւրդը նշանակվել է խնայակի:

Միւսիցների խորհուրդը շուտով քննել է նպատակաւորութեանը տրվող ուսնիկների անլուցնելը:

Լուր կայ որ գործի մի մասի օֆիցիւրներն թոյլ

— Հինգ զու պատմիր, ինչպէս վերջացրից բէկը մեծ պարանի նեւ. ևս այսօր ժամանակ չունեցայ նրան տեսնելու:

— Ես տեսնեցեալ, շատ լուր է վերջացրել, պատասխանեց սպարապետը. — մի այնպիսի բան է ճարել, որ կարողացել է մեծ պարանի հետաքրքիր ստանալ:

— Այսպիսի զեղբերում փոքր ինչ խորամանկութիւնը, իմ կարծիքով, ներքի է, ասաց իշխանը ծիծաղելով. — ևս կարող եմ երեւակայել, թէ ինչ բան ճարած կը լինի:

— Ես յայտնել է մեծ պարանին, թէ դիտաւորութիւն ունի իմ փոխանի ուխտ գնալու, թէ այնտեղ մեռն ախտի երկիր, ցանկանում է ներկայ գտնվել այդ հանդիպին: Եւ այս առիթով նպատակ ունի այցելել իր հայրենիքը, որից շատ տարիներ բաժանված է:

— Վաս չէ ճարել, ասաց իշխանը շարունակելով իր ծիծաղը. — ուխտագնացութիւնը մտահաւանների վրա միշտ մեծ ազդեցութիւն է տեսնում իսկ եթէ բէկը պարզ յայտնելու լինէր իր նպատակը, ինչ ևս կարծում, գուցէ մեծ պարանը իր կողմից կոչվէր նրան:

— Ես վրացիների օգնութեան վրա դատաւորութիւն չունի: Եւ մեծ պարանը կախած լինելով պարտիկներից, գուցէ ինքը առաջինը կը լինէր, որ կը մտանէր նրան, պարտիկներին մի ծառայութիւն անելու համար:

— Եստ հաւանական է, ասաց իշխանը, — գրանցից տանն բան կարելի է սպասել, իսկ այդ ուխտագնացութեան պատրուակը կասկածի մէջ չի գցի մեծ պարանին:

— Զը կարծեմ, որ փոփոխել բէկը վաղուց խաւում էր այդ ուխտագնացութեան մասին, իսկ մեծ պարանը միշտ յեռ էր գցում: Առաջ նա սուրբ սեղերի անունով դիտաւորութիւն ունի հանապարհորդել Հայաստան, նրա գրութիւնը անվար նեւազրակ և յետոյ սկսել գործը, իսկ այժմ հանգամանքները շտապեցրին նրան:

— Այդ երբ:

— Դեռ մի տարի առաջ, երբ տակաւին Արեւեակ աշխարհից այդ նամակները չէին բաւացրած:

— Զարմանալի ծածկամիտ մարդ է եղել այդ բէկը, ասաց իշխանը զլուր շարունակով. — ևս մինչև այսօր հաւատացած էի, որ նա ինձանից ոչինչ գաղտնիք չունի, բայց հիմա ուրիշ կերպ է դուրս գալիս: Մի տարի առաջ նա մտածում էր մի խորաւիկ ուխտագնացութեան վրա, իսկ ևս այդ մտքին զեռ ոչինչ չը գիտեմ:

— Գուցէ այժմ էլ ևս ևս զու շատ բաներ չը գիտեմք, ինչ բաների մասին որ մտածում է նա, պատասխանեց սպարապետը ժպտելով. — բայց պէտք է հաւատանք, որ նրա վարձանքները, ինչ տեսակ և լինելն նրանք, անկեղծ են և գործի օգտին են ծառայում: Այս պատճառով, մենք նրանից իրիտ պահանջող չը պիտի լինենք, և պիտի բաւականանանք այնքանով միայն, որքան որ նա հարկաւոր է համարում մեզ հարցողի: Նրա ազնութիւնը մեծ երաշխաւորութիւն է, որ նա չի խաբի մեզ: — Կարծեմ զու ինձ նեւ կը համոզեցնեմ, որ նա չափազանց ազնիւ մարդ է:

— Բուրբոլին համաձայն եմ, պատասխանեց իշխանը. — նա աւելի ազնիւ է, որքան հարկաւոր է, որ մարդը լինի ազնիւ:

Բողկական մտածութիւնից յետոյ հարցրից նա. — իսկ այդ պարանները ինչ անունով պիտի գան մեզ նեւ:

— Կարծեալ ուխտագնացութեան անունով, պատասխանեց սպարապետը. — Երբեք հայ, էջ միամիտ գնալու համար, ոչ որ նրանց մասին կասկած չի տանի: Բայցի գրանից, մի ուրիշ բան կայ, այդ պարանները թէև այստեղ գանազան պաշտաններ ունեն, բայց բուրբոլ էլ գտնվում են բէկի նախապատրուակներ ներքայ և կազմում են նրա թիկնապետների խումբը: Այս մարդը բէկը շատ պատանաւոր ունի նրանց իր նեւ տանելու:

Ի հարկէ, նա իր պատուի ու ստիճանի համար պիտի ունենայ իր թիկնապետները, իր սովորած, և քառասուն մարդը շատ չէ նրա համար:

— Ի հարկէ, շատ չէ և ցանկացողները քառասուն մարդից աւել չեն լինի, ասաց իշխանը. — Բայց զու գիտեմ, թէ ումը յանձնվեցաւ բէկի պաշտանը:

— Արի լին, միայն առժամանակեայ կատակութեան համար, պատասխանեց սպարապետը. — Բայց պէտք է խոստովանած, որ բէկը այդ մի քանի տարվայ ընթացքում այնքան բարեկարգեց Վրաստանը, այնքան լուր կարգի գցեց նրա խանգարված գործերը, որ այսուհետև շատ նեւ է կատակարել նրան, միայն թէ կատակարիչները աշխատին պահպանել այն, ինչ որ նա հիմնեց, բայց ևս հաւատացած եմ, որ նրա բացակայութեան ժամանակ կրկին տանն ինչ աւելն ու վրա կը լինի:

— Իսկ ինչ կարգապահութիւններ արեց բէկը իր կառուածների և գիւղերի վերաբերութեամբ, հարցրից իշխանը:

— Ոչինչ, նա իր կառուածների մասին ամենին չի էլ մտածում, բոլորը թողնում է:

— Վաս չէր լինի, եթէ ծախել, գուցէ փոքրեր մեզ պէտք կը գային:

— Մի և նայնը ևս առաջարկեցի նրան, ասաց սպարապետը. — բայց նա ինձ պատասխանեց, թէ շարունակեցի գործը պէտք է պատերազմով սրահանվի:

— Այսուամենայնիւ, սկզբում միջոցներ հարկաւոր են:

— Ընձ իրիտ փոքր միջոցներ հարկաւոր են գործը սկսելու համար, իսկ այդ միջոցները ունեւ ես, ասում է բէկը. — Եւ իմ կարծիքով, նրա անձնափոխութիւնը շատ ուղիղ է: Կառուածների վաճառելը կարող էր միայն կասկած յարուցանել և փշուցնել այն ծրագրից, որ կազմել է նա: Իսկ գործի սկսելու համար ևս էլ անհամայն եմ նրա նեւ, որ մեծ միջոցներ պէտք

չեն: Արեւմտեանը մակեղանայիները, Ամիշի մարտերը, Չիլիգիտ-խաները իրանց նեւ զան չէին ման ածում, այլ կերակրվում էին իրանց սրով:

— Բայց եթէ մենք չը գտնենք Հայաստանում այն նախապատրաստութիւնները, որ խառնում են մեզ Արեւեակ աշխարհից ստացված նամակներով, — այն ժամանակ, կարծեմ, բանը կը զմտարանայ և փոքր միջոցներով մի նշանոց գործ կատարել անհնարին կը լինի, ասաց իշխանը:

— Ես աւելի բան թէ զու, սիրելի ինչիցդու ստորած եմ թերահաւատութեամբ վերաբերի զեղի անակնկալ բախտի յաջողութիւնը: Գուցէ պատասխանեց սպարապետը. — իսկ այդ գործում համոզված եմ, եթէ Արեւեակ աշխարհում ոչինչ նախապատրաստութիւններ ևս չը լինեն, մի գործեալ կը յաջողվի: Դու քանի բազմ առէ ինչդ ստեղծի, թէ հայերի սրտում բուրբոլին չէ անգամ հայրենասիրութեան կայծը, ոչ անգամանքներից փոքր ինչ նեւեացած է միայն բաւական է փշուց նրա վրա և իսկոյն կը բուրբոլի, կը բացաւաւրի.... Գրանք քո խաբի են: Իսկ բացաւաւրի, բորբոքել հայրենասիրութեան սրբազան հուրը՝ մենք կարող ենք: Եւ այդ կը լինի գործի յաջողակ սկիզբը, իսկ փոփոխանը Աստուծոյ մեղքունն է: Եւ այնքան ևս աստուծ եմ Հայաստանի աստղին, որքան ևս աստուծ եմ, թէ կայ երկիրում մի սրբոյ յատուր, որը վերջապէս կը լսէ Թուրքի ձայնը և նրան ուժ ու զորութիւն կը տայ փշուր անբարատան բաժակայի եղբիւրները:

Նրանք զեռ երկուր խոսում էին և խորում էին միմեանց նեւ, մինչև զարմացած նեւազրակ անեանկի նեւ լուսամտաններից վազորդեան օրեգակի հառապայիները: Այժմ միայն հափքցան, որ ողջ գիշերը լուսացրի են:

(Կը շարունակվի)